



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ N 03Լ

«ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ» ԵՎ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՎՈՐ»  
ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ  
ՆՊԱՏԱԿՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 25-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

## ՈՐՈՇՈՒՄ Է

1. «Տարվա լավագույն դատարան» և «Տարվա լավագույն դատավոր» անվանակարգերում առաջարկվող թեկնածուների ընտրության նպատակով ստեղծել ժամանակավոր հանձնաժողով հետևյալ կազմով՝

Արման Սկրտումյան	ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ (հանձնաժողովի նախագահ),
Մերժիկ Ավետիսյան	ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ,
Երվանդ Խունդկարյան	ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի նախագահ,
Վազգեն Ռշտունի	ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահ,
Անատոլի Մաթևոսյան	ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նախագահ,
Հովսեփ Բեդկյան	ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի նախագահ.

2. Մինչև ս/թ. փետրվարի 09-ը պատրաստել առաջարկություն «Տարվա լավագույն դատարան» և «Տարվա լավագույն դատավոր» անվանակարգերում առաջարկվող թեկնածուների ընտրության վերաբերյալ՝ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի նիստում հաստատելու համար:

**Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների  
խորհրդի նախագահ**

**Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆ**

**2017թ. փետրվարի 02  
ք. Երևան**